



4. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ Պ Տ Ո Ւ Յ Տ Ը\*

Ա.— Հայ Եկեղեցին Արևելյան Եվրոպայի մեջ

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Եկեղեցվո վեց դարերը փնտռելու կուգա այս ափերուն վրա, և օրհնելու բեկորները, որ դեռ կմնան այդ վեց դարերեն, իբրև տեսակ մը խորհրդանշան այն տազնապններուն, զորս ապրեցավ Հայ Եկեղեցին և մանավանդ մաքառումներուն, զորս մղեց այն դիմանալու համար հազար փորձութիւնս:

Եվ սակայն հայ ժողովուրդի պատմութեան բազմաթիւ գլուխներուն պես, շփոթ է նաև հայոց անցյալը հողի այն երկար երիզին վրա, որ Կիլիկիոյ կսկսեր Պոլսո դուռներուն հասնելու համար, և շատ քիչ բան գիտենք այն պարագաներուն մասին, որոնց մեջ ծագում առին առաջին հայ կորիզները:

Այն զուլգ աղետները, որոնք Անիի կործանումն ու Կիլիկիոյ Հայաստանի չքացումն եղան ՓԱ և ՓԻ դարերուն և որոնք հայ ժողովուրդի հոծ զանգվածներ շորս հովերուն ցրվեցին, այնքան ահավոր եղան և շրջագոյնցիլ, որ մեզմե կծածկեն ճամբան, ուրկի

մեկնեցան քարավանները՝ հյուրընկալ ափեր որոնելու համար իրենց:

Այս շրջաններու պատմութեամբ զբաղողներս մեր կարգին կնճիռներ կստեղծենք մենք ալ: Այն մոլորութիւնը, որ երբեմն կհամակեր մեր երանելի նախնիքը դրախտեն սերած ըլլալու փառքը ավանդելու համար սերունդն սերունդ, կերպով մը վարակեր է մեզ ալ: Ծիգ մը ունինք առասպելներու կառչիլ, ամեն գինով հին երևալու համար մեր պատմած շրջաններուն մեջ:

Թյուրիմացութեան մեջ են մեր հին ու նոր բանասերները, որոնք հայ գաղութներու պատմութեանը հնութեամբ օծելու համար, գաղութի կորիզ կհոշակեն ամեն մեկ հայ հետք, որուն կհանդիպին աշխարհի այս կամ այն մասին վրա: Մեր կարծիքով, մեր գաղութները պետք է թվադրել այն պահէն, երբ հայ կորիզները համայնքի վերածված են արդեն, իսկ համայնքներ ստեղծված են բացառապես հայ եկեղեցիներու շուրջ:



\* Վեհափառ Հայրապետի Ռումինիա կատարած հով-վապետական այցելութեան առթիւ, ծանոթ բանասեր և սիրված մտավորական Լ. Ճ. Սիրունի տպագրութեան է պատրաստել ? գլխից բազկացած մի բովանդակակից ռառմանասիրութիւն «Հայ Եկեղեցին ուսմեն հողի վրա» խորագրի ներքո, որից հրատարակում ենք որոշ հատվածներ, ամբողջական գործը շուտով տպագրված տեսնելու սրտագին ցանկութեամբ:— Խմբագրութիւն «Էջմիածին» ամսագրի:

Արևելյան Եվրոպայի երկու ծայրերուն վրա ալ առասպելներով կսկսի հայը իր պատմութեանը: Անուններն ու թվականները, զորս ավանդութիւնը մեզ կհասցնեն, բավական չեն սակայն հայ գաղութի կորիզներ ենթադրելու համար որքան Կիլի, նույնքան Բուլղարիո մեջ, ինչպես հունգար տիրապետութեան տակ եղած վայրերուն մեջ ալ, վայրեր, ուր հայ հետքեր անշուշտ եղած են,

Հայ Եկեղեցին այս շրջաններուն մեջ ոտք կոխելին շատ առաջ:

Այսքանը սակայն ստույգ է, որ հետագայի հայ գաղութները Ուկրաինային մինչև Բալկանն, կապ չունին առաջին այն հայ հետքերուն հետ, զորս կփորձենք որսալ մշուշին խորեն: Հայ Սփյուռքի պատմութեան համար անշուշտ արժեք ունին այդ հետքերը ևս, բայց պետք է շատ խոժոռ նայինք ետև, որպէսզի այդ արժեքը մեզ չզինուլցնեն:

Մեր ծանոթութիւնները կսկսին ճշգրիտ դառնալ հազիվ այն պահէն, երբ ԺԴ դարուն Ղրիմին եվրոպական ափ կենտրոնին նոր քարավաններ, կայք փնտռելու համար ասպընջական երկիրներու տակ, հավանաբար հետևելով ավելի կանուխ Մայր Հողին խույս տվողներու հետքերուն: Նույն այդ դարու առաջին կիսուն, Լեհաստան ու Մոլդովա ժամանած են արդեն առաջին հայ քարավանները, և բջիջ կազմած, հետագային ժամանողներու համար ալ: Մեծն Կազիմիր, երբ 1356-ին առանձնաշնորհումներ կուտար Լվովի հայոց, պետք էր հայերը վաղուց թիվ կազմած ըլլային հոն, իսկ Դրագոշ Վոդան, 1352-ին հիմնելու ատեն Մոլդովայի իշխանապետութիւնը, հայեր կգտնէր այնտեղ:

Տասնյակ մը կաթողիկոսական կոնդակները, որոնք մեզ հասած են ԺԴ և ԺԵ դարերին, մեզ օգնութեան կուզան: Առաջին կոնդակը, որով Մեսրոպ կաթողիկոս Լվովի Աթոռին համար Գրիգորը եպիսկոպոս կձեռնադրէ, 1364 թվականն է: Կհաջորդեն Կոստանդին և Թեոդորոս կաթողիկոսներու կոնդակները 1374 և 1383 թվականներուն, և անկէ հետո, զանազան թվականներու, ուրիշ կաթողիկոսներուն ալ:

Դժբախտաբար կաթողիկոսական այդ կոնդակները ևս կնձիռներ կատեղծեն իրենց կարգին: Հայ համայնքներ մատնանշած ատեն Լվովի թեմին ենթակա շրջաններուն մեջ, կարճանագրեն այնպիսի անուններ ևս, որոնց տեղն ու ճշգրիտ կոչումը ճշտելու համար հայ բանասիրութիւնը կշարունակէ վիճիլ: Մինչև այսօր ալ դեռ պարզված չէ, թե ո՞ւր կգտնվեն Մանքերմանը, Պտինը<sup>1</sup>, Ընկիսալան, զորս կհիշեն կաթողիկոսական այդ կոնդակները Լվովի թեմին ենթակա քաղաքներու կարգին:

\*\*\*

Հայ թեմ, իրականին մեջ, ԺԴ դարու կեսերին է, որ կթագրվի ուրեմն: Ան ծնունդ կառնէ Լվովի շրջանին և Մոլդովայի մեջ գրեթէ միաժամանակ: Առաջին հայ եկեղեցիները և հետևաբար առաջին հայ համայնք-

ները կատեղծվին, երկու շրջաններուն մեջ ալ, նույն այդ դարու կեսերուն: Ըստ մեզ հասած տվյալներուն, առաջին հայ եկեղեցին Բոտոշանը կունենան 1350-ին, հետո՝ 1363-ին՝ Լվովը, Միրեթը, Սուչավան և Լուցկան՝ հավանաբար 1388-են առաջ, 1395-ին՝ Յաշը, 1398-ին՝ Կամենեցը, և դեռ ուրիշ քաղաքներ հարևան զույգ գաղութներու մեջ:

Լվով և Սուչավա ամբողջ երեք դար հավակնած են հոգևոր կեդրոն դառնալու: Եվ եթէ Լվով հաջողած է երբեմն ավելի ճարպիկ հանդիսանալ իր հավակնութեանց մեջ և հարևան թեմը քանիցս ենթարկել իր հոգևոր իրավասութեան, Սուչավա փառքի իր շրջանները ունեցած է ինքն ալ, իր զույգ վանքերով և իր երկու և երբեմն ավելի եկեղեցիներով, ու երկար ատեն մնացած է հոգևոր օջախ մը Մոլդովայի հայ համայնքներուն համար, իր դիրքերը Յաշի և մասամբ ալ Բոտոշանի զիջելի առաջ:

Լվով հազիվ կրցած է սակայն երեք դար դիմանալ: ԺԷ դարու կեսերուն, ան վաճառած է իր հողին, լքելով իր պապերուն հավատքը, իր կապերը խզելով Հայ Եկեղեցիին հետ, և անոր պատմութեան մեջ ձգելով այնպիսի ամոթալի էջեր, որոնք երբեք պիտի չկրնային սրբվիլ: Ան ճգնած է հետո ուսկան նետել հարևան գաղութին ծոցին ներս ալ, և սակայն Մոլդովան շարունակած է ամուր մնալ Հոռմի մարդորսական բոլոր փորձերուն դեմ:

Քիչ հետո, Հայ Եկեղեցվո պատմութենէն ինքզինք պիտի արտաքսեր Տրանսիլվանիո հայ գաղութը ևս, որ 1672-ին մեկնած Մոլդովային հոծ զանգվածով մը, ոչ իսկ զույգ տասնյակ տարի պիտի դիմանար Հոռմի և Ավստրիո սադրանքներուն ու անձնատուր պիտի ըլլար հոգւով, հետզհետ ընկճված իր ավանդութեանց կառչած մնալու իր հուսահատ փորձերուն մեջ, իր ծագումը հիշելով հեռավոր մշուշի մը ընդմեջն:

\*\*\*

Մոլդովան, այդ օրեն ասդին, Հայ Եկեղեցվո միակ միջնաբերդը մնացած է այս շրջանակներուն մեջ: Ան կրցած է երեք դար ևս դիմանալ, հակառակ փորձութիւններուն, որոնք անպակաս եղած են միշտ: Մինչ լեհահայր կուծանար անդին, և հայկական Տրանսիլվանիան կուրանար իր ավանդութիւնները, Մոլդովայի հայ համայնքները փարած կմնային իրենց պապական հավատքին, կծկտած մնալով Հայ Եկեղեցվո պաշտպանութեանը տակ:

Այնպես որ Արևելյան Եվրոպայի հոգևոր հայ կյանքը ի վերջո եկավ սեղմվիլ ռումեն երկիրներու մեջ, Մոլդովայի մեջ նախ, ուր

<sup>1</sup> Գուց Աքքերման, Վիտին—Խմբ:

ավանդությունները երկար դիմացան քան ուրիշ որևէ տեղ, հետո Մունտենիո<sup>2</sup> (Վալաքիա) մեջ ալ, ուր ևս հայ համայնքներ սկսած էին կազմվիլ Մուղղավային քիչ հետո, և վերջապես Դոբրուչայի<sup>3</sup> մեջ, որ նույնպես իր հայ համայնքները բերավ կցեց նախկին երկու իշխանապետութեանց հայ համայնքներուն:

Դարերը, ինչպես ամեն տեղ, իրենց դերը կատարեցին սակայն այս փոփոխումն վրա ալ: Սերունդներու համառությունը ալիքներուն դեմ կուրծք տալու՝ անզոր մնաց հեղեղին առջև, որ միշտ կարշավեր: Այլիչն անգամ, որ անընդհատ հոսեցավ դուրսեն, ուրիշ բան չըրավ, բայց եթե ատեն-ատեն թարմացնել անճիտվելու դատապարտված հեք ծառը:

Այսօր, Ռումանիո հայ թեմը համեստ մեկ մասնիկն է միայն Հայ Եկեղեցվո: Ան, ինչպես ըսինք, խորհրդանշան մըն է առավելապես այն վեց դարերուն, զորս հայ գաղութը ապրեցավ իր հովանիին տակ, ասպնջական ժողովուրդի մը ծոցին մեջ, որուն ճիգերուն խառնեց իր ալ քրտինքը:



Ամենայն Հայոց Կաթողիկոսին այցը այս փոփոխումն առիթ եղավ քրքրելու մեր պատմութեան քանի մը մոռցված էջերը, մարդոց հիշողութեանը թարմացնելու համար պարզապես: Այդ էջերը պետք է որ կցվեն այնուամենայնիվ Հայ Եկեղեցվո Հոգևոր Պետին ուղևորութեան, որովհետև շատ սերտ կապված էին անոնք Հայ Եկեղեցվո ապրած դարերուն հետ իսկ այս երկնքին տակ, հոգ չէ, թե արգք ակնարկն մը անդին շանցնեին նոթերը, զորս ընթերցողը պիտի գտնե այս էջերուն մեջ:

Հետևաբար, պատմական նոթերը, որոնք սկսված են այս էջերուն մեջ, այս շրջանի հայութեան անցյալը ներկայացնելու բնույթը երբեք չունին: Անոնք կփորձեն տալ պարզապես թիվեր ու դրվագներ Հայ Եկեղեցվո անցուցած կյանքին մասին այս փոփոխումն վրա, օգտվելով Հայ Եկեղեցվո Պետին անոնց տված առավելապես այն վայրերուն մեջ, ուրկե պիտի անցնեն Ան:

Եվ սակայն, Հայ Եկեղեցվո վեց դարերու այս պատմութեանը արդար է, որ օր մը լրիվ գրվի, սկսելով այն օրերեն, երբ Հայ Եկեղեցին ինք ևս հետևեցավ տարագիր հայ քաղաքներուն, իր հովանիին տակ դիմացնելու համար զանոնք աշխարհի բոլոր փորձու-

թյուններուն, պատմելով, հանգրվան հանգրվան, բոլոր այն տաճնապները, որոնք փոթորկեցին վեց դարերու այդ կյանքը, հասնելու համար մեր օրերու մարդոց հոգեդարձի աղվոր, բայց տարաբախտ ճիգերուն:

**Բ.— Անի քաղաք պահ մը կժպտի**

1965 հունիս 24—25:

Հազվադեպորեն կտրվի մարդուս ապրիլ հուզումներու այն պահերը, զորս ապրեցավ ամբողջ երկու օր Սուլավայի մեջ այս տողերը գրողը:

Ան քանիցս եղեր է Սուլավա, բայց ոչ մեկ ատեն այսքան խոռվը չէ համակեր իր հոգին, որովհետև ոչ մեկ ատեն այսքան խորունկն չէ լացեր Անի քաղաքը, որքան այս օրերուն, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոս մըն է եկեր վերջին «Հոգևոր»-ն ըսելու իր ավերակներուն վրա:

Մերունի քահանա մըն է, որ կհսկե Անիի ավերակներուն: Գնել քահանա Մանդալյան, «այս սրբավայրերու ծերուկ պահակը»,— ինչպես ան ինքզինք կոչեց Վեհափառին ուղղած իր ուղերձին մեջ,— Արմաշեն եկած նետված հոս, վերջին լուսարարն է այս աղոթատեղիներուն, ուր այնքան դարեր հայը խոսեր է իր Աստուծուն հետ՝ դիմանալու ուժ աղերսելով:

Սրբ Ս. Խաչ կմտնե Հայոց Կաթողիկոսը, իր օրհնութեանը ա՛լ հասկցող մը չկա: Ցանցառ են հայերը եկեղեցին լեցնող բարեպաշտներուն մեջ, բայց անոնց մեջ ալ իրենց պապերուն լեզուն չկա գիտցող մը: Ինչպե՛ս կկսկծան արդոք ժամուն հեք պատերը, որոնք դարերով հայու աղոթք լսած են ու մխիթարված:

Խոռվըր մեզ կընկերանա, երբ կբարձրանանք քահանային սենյակը:

Հոս, ճիշտ այս սեղանին առջև, Վաղգեն վարդապետը իր քառասունքեն հանեցինք: Սեղանին կմասնակցեր ծերունազարդ Կարապետ Կըրնան, հայազգի պատկառելի դատավորը, վերջին փշրանքը, որ Անիեն դեռ կմնար և որուն հետ ինքն ալ գերեզման պիտի մտներ. քանի մը տարի հետո, մեկտեղ տանելով դարերն ու իրենց ավանդութեանները:

Պիտի չմոռնամ երբեք դրվագը, զոր Կըրնան մեզ պատմեց օր մը, ուսանողութեան իր տարիները հիշելու ատեն: Վիեննա, ուր կուսաներ, սենեկակից ունեցեր էր սերբ ուսանողներ, որոնք առտու մը նրբացքին մեջ զայն կկեցնեն հարցնելու համար, թե որո՞ւ հետ ժամերով կվիճեր գիշերը իր սենյակին մեջ:

— Մեկը չունեի մոտս,— կպատասխանե Կըրնա:

<sup>2</sup> Հարավային Ռումինիան Դանուբի փոփոխումն մինչև Կալպատեան լեռնաշղթան:

<sup>3</sup> Հարավ-արևելյան Ռումինիան, Սև ծովի փոփոխումն:

— Բայց բարձրաձայն խոսակցութեան ձայներ կուզային սենյակեդ,— կըսե սերբ ուսանող մը:

— Հասկցա,— կհարե կըինա.— երբոր առանձին ըլլամ, հաճախ բարձրաձայն կխոսիմ մինակս, որպեսզի հայերենս շնորհամ...:

— Այսպիսի ժողովուրդ մը մի՞թե կմեռնի,— կըսեն իրարու սերբ ուսանողները:

Այդպիսի ժողովուրդ մը բնա՛վ չի մեռնիր. բայց իր բեկորները, հայրենի հողին հեռու, պիտի մեռնին ուշ կամ կանուխ, դիմանալու ի՛նչ ճիգ ալ փորձեն:

Կարապետ Կրինան վերջինն էր անոնց, որոնք դարեր հետո ալ դեռ պահեցին մայրենի բարբառը նվիրական ավանդի մը պես, բայց ի վերջո իրենց հետ զայն ալ գերեզման տարին:

Հիմա հայու այլևս չես հանդիպիր Սուշավայի մեջ, իսկ հայ բարբառը վաղուց է լռած իսպառու: Հրաշյա Աճառչան վերջին բախտավորն էր եղեր. հանդիպեր էր սուշավացի բահանայի մը, որ նույնպես Կարապետ Կրինա կկոչվեր, որ իր պապերուն բարբառը դեռ գիտեր: Մենք այդ բախտը չունեցանք: Մեր պատահած հայերը, ասկե շորս տասնամյակ առաջ, այլևս խոսքի բրդուճենք միայն կհիշեին:

Եվ սակայն, մինչև քանի մը սերունդ առաջ, հայ բարբառը երբեմն հոս ալ կլսվեր փողոցներուն մեջ. մարդիկ, իրար հանդիպած ատեն, դեռ կըսեին իրարու.

— Բարի օր կկամենամ ձեզ:

Կամ թե, տոնի օրերու՝

— Սուրբ օրդ շնորհավոր:

Հիմա հայ մը չկա, որուն հանդիպիս, հայ մը, որ քեզ իր տունը կանչե ըսելով.

— Մեզի գիտամթը պի պաշխիք մեր մոտ աշխատելով (մեզ բախտավորութուն պիտի ընծայեք մեզ այցելելով):

Փոխարեն, քարերն է որ կխոսին հիմա: Անոնցմե շատեր կմնան դեռ Սուշավայի մեջ, ժամերուն բակը լքված: Անոնց վրա դեռ կապրին հեք տառերը մեր լեզվին, որ մեռած է իսպառ, այդ քարերուն տակ թաղված մեռելներուն պես:

Կարդանք, օրինակ, տապանաքար մը, զոր ճակատագիրը բերեր, նետեր է Ս. Խաչ եկեղեցվո բակը.

«Տապանս է այս Մարտիրոսին Մեծ տամդանի եռմիս պրքին Աստ եղեալ մարմին սորին Ի ծերութե ժամանակին Եւ առ Ած փոխ զոգին Թվ. ՌԿԱ մախի ԻՌ-ին»:

1612 թվականը կրող այս քարին ներքև մոլորվացի երեմիայի Մովիլը իշխանին մաքսերուն պես Մարտիրոսն է, որ կհանգչի...:

Ու ո՛վ դիտե դեռ ինչքա՛ն Մարտիրոսներ կան, որոնց քարերը մեզ չէ բերած այն ահավոր դահիճը, որ ժամանակն է...:



Կրարձրանանք հիմա Զամբա: Անգամ մըն ալ ելեր ենք այս բարձունքն ի վեր, 22 տարիներ առաջ, նորընծա վարդապետին հետ: Հիմա արդեն Զամբա կուզա Ան իբրև Հայոց Հայրապետ, ու իր հետը հայ և ուսմեն բարձրաստիճան հոգևորականներու ամբողջ խումբ մը կա, որ պատկառանքով կբարձրանա սարն ի վեր ու երկյուղած կմտնե Զամբայի պատերեն ներս, ուր դարերը բազմաթիվ հայ եպիսկոպոսներ տեսան, և ուր ժէ դարուն սկիզբը այնքան ձեռագիրներ գրեց ու ծաղկեց Ղաղար Բաբերդցին:

Հիմա լքված է Զամբան, ու ա՛լ աղոթք չի լսվիր Ս. Օգսենդի այս դարավոր տաճարին մեջ: Բայց դարերը իրենց փառքը դեռ կպահեն անոր խարխլած պատերուն վրա, ու արվեստի մարդիկ միշտ անոնց պիտի մոտենան երկյուղած, այո՛, ուխտավորներու պես:

Երբ հոգևորականներու պատկառելի խումբը կմտնե պարիսպներեն ներս, տարբեր հուզումով մը լեցված է հոգիս. ոչ որ չի տեսներ անշուշտ սարսուռը, որ համակած է գիս, և թող չծիծաղի ընթերցողը ևս, երբ իրեն ըսեմ, թե ուխտի կուզամ ես ալ Զամբային, խորհրդավոր այս օրը, երբ էջմիածինը ողջույն է զրկեր հեռավոր այս Ս. Օգսենդին, որուն, ավա՛ղ, վաղուց է մատաղ բերող չկա Ս. Հակոբի տոներուն:

... Զարհուրելի պահու մը, երբ անասուններու վագոնի մը մեջ թխմված, դեպի անծանոթը կբշվեինք, և երբ ծարավեն ու տենդեն պապակած, լեղուս վագոնին սառած պատերուն կքսեի զովանալու համար վայրկյան մը, չեմ գիտեր ուրկե ուր հոգիես հանկարծ տարօրինակ աղերս մը թռավ.

— Ըրե՛, Աստված, որ անգամ մըն ալ խմեմ Զամբայի հորեն...:

Ընթերցողը հարկավ գիտե, թե ամենեն այլանդակ մտածումները ամենեն ահավոր վայրկյաններու կխուժեն մեր մեջ, բայց ան չի գիտեր, թե 1945 դեկտեմբեր 13-ն էր այդ օրը, երբ Սիբիր կփոխադրվեինք: Ս. Հակոբը այդ վագոնին մեջ կգտներ գիս այդ տարին, տենդեն ու ծարավեն խելահեղ: Եվ ըսեք հիմա, որ խորհրդավոր բան մը չկա այն աղերսին մեջ, որ սրտես ժայթքեց այդ դժնդակ պահուն, և այն պատեհութեան մեջ, որ ինձ տրված է այսօր այցի գալու Ս. Օգսենդին:

Ու այն միևնույն պատուքը, որ շրթներս տոչորեր էր քսան տարիներ առաջ հոգեկան տազնապի մը պահուն, զիս համակած է կարծես հիմա ալ, երբ բաժակ մը ջուր կիսնդրեմ Զամբայի հորեն...:

Ու ոչ ոք չգիտցավ, թե քանի՛ տարիներու պապակ մը կսփոփեր ան... Ու ոչ ոք չանդրադարձավ շրթներս խոտվող սարսուռին...:



Զամբայեն Ս. Խաչ կղզանանք կրկին; ծերունի քահանային տունը, մեյմեկ սուրճ առնելու: Ռումեն բարձրաստիճան հոգևորականներու ամբողջ խումբ մը կընկերանա միշտ Վեհափառին, ու համով ստուգիս մը կսկսի դարերու անցքին մասին այս ասիերին: Բոլորը շփոթած են երկու վանք ու երկու ալ եկեղեցի գտած ըլլալնուն համար քաղաքի մը մեջ, ուր հայ գրեթե չկա այսօր, ու իրենց շփոթութիւնը ավելի կաճի, երբոր կիմանան, թե ուրիշ երեք եկեղեցիներ ևս երբեմն եղեր են այստեղ:

Ու ո՞վ կրնա չզարմանալ, երբ այդքան աղոթատեղիներ պատմութեան հանձնած են իրենք զիրենք, լքված առհասարակ...:

Ավանդութիւնը շորս հազար հայ ընտանիք կբերե այստեղ Մուղղվայի ծաղկիլ սկսած օրերուն: Ո՞ւր են անոնց հետքերը:

Ապերասան այս հարցումը ցցվեր է մարդոց մտածումին մեջ, ամեն անգամ, որ անոնք պատմութիւնը թղթատեր են:

Այդ դաժան հարցումը մեզ ալ ուղղվեր է հաճախ, ու շվարեր ենք պատասխան փնտրած ատեն.

Ինչո՞ւ հայը հատավ Մուղղվայի չլոթը քաղաք»-ներուն մեջ, ու ինչո՞ւ հատավ հոս, Սուլավայի մեջ...:

Շվարեր ենք, որովհետև մեզ դուրին չէ եղեր վճռել, թե ինչո՞ւ, օրինակ, մեկ դարու ընթացքին չքացավ Սուլավան: Բազմաթիվ ազդակներ քով-քովի եկան այդ աղետը դարբնելու համար: Մեծ դեր կատարեցին տնտեսական պայմանները նախ ավստրիական տիրապետութեան տակ. քանի Սուլավա կորսնցուց չիր տնտեսական կարևորութիւնը, այնքան շատցավ թիվը քաղաքին հեռացողներուն: Փոքր դեր չխաղաց նաև անձիտումը, նվազումը ամուսնութեանց և ամուսնութիւնը հայ ընտանիքներուն:

Դեռ նոր, համբերութիւնն ունեցանք ցուցակ կազմելու մեկ ու կես դարու ընթացքին Սուլավայի մեջ ծնած հայ մանուկներուն: 1800-են մինչև 1850 ծնունդներուն թիվն է եղած 2068, ԺՔ դարու երկրորդ կիսուն՝ 841, և վերջին հիսուն տարիներուն՝ հազիվ թե 163:

Անձիտում չէ, հապա ի՞նչ է աս...:

Այլասերումը դեր չէ խաղացեր, եթե Սուլավան չքացեր է դարու մը ընթացքին: Քիչ են եղեր իրենց ծագումեն ամչոցողները, իրենց պապերուն հավատքը ուրացողները հոս: Սուլավան նոսրացեր, հատե՛ր է ներսնն:

Հայկական Սուլավան երբեմն տարածված էր նաև իր շրջակա քաղաքներուն ու գյուղերուն մեջ: Գյուղեր կային, որ կպատկանեին սուլավացի հայերուն իրենց, կամ կվերցվեին անոնց կողմն կապալով: Այդպես էին, օրինակ, Թեղդրեշտ, Շիկյա, Ռումանեշտ, Յակոբեշտ, Դերմանեշտ, Օրոսչեն, և դեռ շատ այսպիսի գյուղեր:

1882 հոկտեմբեր 15 թվականով վավերաթուղթ մը, որ կնկարկայացնե ցուցակը հայ համայնքին մեջ քվեարկութեան իրավունք ունեցող 177 անձերուն, կթվե անոնց ապրած վայրերը ևս: Մոտ կեսը, այն է 87 հոգին, կբնակին Սուլավայի մեջ: Հետո կուգան Հոմորի, Իլիշեշտի, Ռատաուձի, Շիկյայի, Ռոնեշտի, Տոնայի, Ռոսոխաչի, Չերնուլիցի, Պրեշտի, Սուլայի, Գաջիգայի մեջ բնակողները: Քվեարկութեան իրավունք ունեցող հայեր կապրեին նաև ուրիշ 22 ավաններու մեջ:

Հիմա հայերի դատարկ են բոլոր այդ վայրերը:

Սուլավայի հայերեն շատերը կարկառուն դիրք ունեին ինչպես քաղաքին, նույնպես շրջանին, նույնիսկ ամբողջ երկրին մեջ: «Տոն» տիտղոսով հայ ընտանիքներ եթե միայն Փրոնգոզներն ու Քափրիններն էին, փոխարեն, բազմաթիվ էին երկրին տնտեսական կյանքին մեջ դեր կատարող սուլավացիները:

Վավերաթուղթ մը, որ կթվագրվի անցյալ դարու առաջին տարիներին, մեզ գաղափար կուտա հայոց դիրքին մասին Սուլավայի մեջ իբրև առևտրական տարր: Առաջին հերթին ան կհիշե ճեզի արքատուր» և «տավրով արքատուր» ընողները, և հետո հինգ դասի կբաժնե քաղաքին հայ վաճառականները, — «օտաջով մեծ պազըրկան», «մոշիայով մեծ պազըրկան», «պալդայով մեծ պազըրկան», «ճարթով պազըրկան» և «միջակ պազըրկան»: Իսկ հայոց ըրած արհեստներուն մեջ կթվե «սաբօնար»-ը (օճառագործ), «ջօպօթար»-ը (մուճակագործ), «կոշքար»-ը (կոշկակար), «պլանձի»-ն (մուշտակագործ), «պաքալիաով տուբանչի»-ն (նպարավաճառ) և «սուրունի»-ն (մաշկագործ):

Քանի մը հայեր միայն կան հիմա պետական ծառայութեան մեջ:



Քանի՜-քանի՜ անգամ սակայն Սուլավան փորձեց ճողոպրիլ մահվան ճիրաններին: Քերեա ոչ մեկը հայ գաղութներին այնքան ուժով չէ կռվեր դարերուն դեմ: Ան նախ փորձեց դիմանալ, կռվան ըրած իրեն հայրենի ավանդությունները: Փարած մնաց իր պապերու հավատքին: Ու մինչ արիքին կուրծք տալ շիրցավ հարևան կռվով, ինք ամուսնյան մատնեց մարդորաներու բոլոր փորձերը: Ան երբեք ալ Մայրենի Եկեղեցվո ճովանիեն չհեռացավ, նույնիսկ երբ պարագաները Ալստրիո տիրապետության հանձնեցին զինքն ալ բովանդակ Բուքովինայի՜ հետ, ու կաթոլիկ կայսրության մեջ միակ հայ կորիզը մնաց, որ չվաճառեց իր հոգին, մինչ կռվուն ու Տրանսիլվանիան ծունկ շոքեր էին վաղուց:

Սուլավա եթե երկար դիմացավ, այդ բանը կպարտի նախ իր ներսը ամուր պահած սրբություններուն, որոնցմե բան մը չըզհեց: Մատաղները, զորս իր վանքերուն կընեի տարին երկու հեղ այնքան երկյուղածությամբ, հայրենի ավանդությանց հեռավոր արձագանքն էին: Հայ Եկեղեցվո հետ կապված ամեն սովորություն գուրգուրանքով փոխանցեց սերունդն սերունդ: Մինչև մեր օրերուն ալ աճուրդի կղներ եկեղեցվո վարագույրը բանալու, խաչը ջուրն հանելու, Գանիելին գիրքը կարդալու փառքը, ու մրցումը, որ կ'աղվեր այդ փառքը կորզելու համար, իր ժամուն ամենն ուշագրավ եկամուտներեն մեկը կազմեց տարվետարի:

Անոնք, որ ինձ պես առիթ ունեցեր են կամ պիտի ունենան օր մը աչքն անցնելու հազարավոր վավերաթուղթերը, զորս դիսվածք կրցեր է կորուստն փրկել, ապշած պիտի մնան Սուլավայի թափած ճիզերուն համար հանուն իր սրբություններուն: Հայ լեզուն մեկն էր եղեր անոնցմե և Սուլավա զայն հասցուց մեր դարու սեմին: Հայ բարբառը ան պահպանեց ինչպես իր ընտանիքին ներս, նույնպես իր նամակագրությանց մեջ, ու ատաղձ կտակեց հայ բանասիրության:

Գուրգուրանքը, զոր ան շուայեց հայ դպրոցին, մեկն էր ամենն հուզիչ նախանձախնդրություններն, որոնց փարեցավ պահ մը ավելի դիմանալու համար հեղեղին:

Երբ մարդ կ'իջևատե, օրինակ, հայ դպրոցի մատյաններ ուսման պետական արխիվներուն կամ ուսմանահայ թեմական արխիվին մեջ, շի կրնար շեցվիլ հպարտությամբ, բայց և դառնությամբ. հպարտություն այն մեծ՝ ճիզին համար, զոր Սուլավա ամբողջ

դար մը ըրավ իր հայ դպրոցն ունենալու համար, և, ավա՜ղ, նաև դառնություն ի տես աղետին, որուն կու գնաց ի վերջո Անիի վերջին պատնեջը այս ակերուն վրա:

Սուլավա կզգար, որ կհյուծեր ներսն, ու թարմանալու փորձեր հաճախ ըրավ: Գիտեր, որ ա՛լ ցամքած է իր հեք արգանդը, և ուզեց նոր հայեր բերել իր ծոցը:

Սա շենքը, Ս. Խաչի բակին մեջ, որ հիմա իբր դպրոց կ'ծառայե օտարին, Քրիստեա Հաչիի կաակով կառուցվածն էր: Հայրենասեր, բայց միամիտ այս մարդը գումար մը ձգեք էր ազգին, որպեսզի որբանոց մը հիմնվի Ս. Խաչի հովանիին տակ, երկու սեռե հայ մանուկներ բերվին հոն, տուն-տեղ ըլլան Սուլավայի մեջ ու զայն կրկին շենցնեն օր մը:

Սուլավան նման երազ մը պարբեր էր քանի մը տասնյակ տարի առաջ ալ, Ադանայի ջարդերեն քիչ հետո: Տասնյակ մը որբեր բերեր էր Պոլսեն, զանոնք խնամեր, հուսալով, որ անոնք պիտի թարմացնեն հայ ընտանիքները Սուլավայի մեջ: Որբերը մեծցեր, մարդ էին եղեր, բայց անոնք ավելի դյուրավ էին ուժացեր, քան դարերուն կուրծք տվող այս հեք հայերը:



Ուրբաթ օր մըն էր, երբ Վազգեն նորն՝ ծան իր վարդապետական անդրանիկ պատարագը կընեի Հաճկատարի մեջ, 28 նոյեմբեր 1943-ին, քանի մը վկաներու առջև, որոնցմե մեկն ալ մենք էինք: Քսաներկու տարիներ հետո, ուրբաթ առտու մըն է դարձյալ, որ կընկերանանք իրեն, երբ իր շքախումբին ու ուսման բարձրաստիճան հոգևորականներուն հետ Հաճկատար կուգա այս անգամ իբրև Հայոց Հայրապետ, տեսնելու համար խուցը, ուր իր քառասունը անցուց, և կուսավորչին ողջույն բերելու համար Հաճկատար Ս. Աստվածածնին, որ դարերի ի վեր հայ հավատքը կապահպանե հեռավոր այս բլուրին վրա:

Յանցառ են հիմա հայերը, որ ուխտի կուգան իրեն: Փոխարեն, ուրբաթն ուրբաթ, Հաճկատարը կըցվի ուսման ուխտավորներով, որոնք գյուղերեն կուգան հրաշք աղերսելու հայոց Աստվածածնին: Պետք է տեսնել երկյուղածությունը այդ գեղջուկներուն, երբ անոնք ծնկաչոք կբարձրանան նվիրական բլուրը և ծնկաչոք ալ երիցս կդառնան հայոց վանքին շուրջ:

Այս անգամ ավելի սովոր են եկած մուսուկա և հեռավոր գյուղերեն, իմանալով, որ Հայոց կաթողիկոսը ինքը Հաճկատար պիտի գա անձամբ, և պիտի օրհնե ուխտավորները: Հոգևորական թափոքը հազիվ ճամբա կգտնե

4 Մուղղվայի հյուսիսային շրջանը, դեպի լեհական սահման:

սակայն տաճար մտնելու համար. իր քայլերուն առջև պառկած են դարման տենչացող աղջնակներ, կիներ, որպեսզի թափորը իրենց վրայն անցնի, կոխոտն նույնիսկ զիրենք: Մարդկային տառապանքը, ա՛հ, որքա՛ն հզոր է երբեմն...:

Շատ քիչ պատարագներ այնքան խորհրդավոր եղած են ու այնքան հուզիչ, որքան այդ օրվանը Հաճկատարի փոքրիկ այդ տաճարին մեջ: Զայն կմատուցանեն Գևորգ Սերայգարյան երիտասարդ վարդապետը, ի ներկայության Վեհափառին և իրեն ընկերացող հայ և ռուսներ հոգևորականության: Հանդիսավոր հանդիպումներ շատ եղան, վերջին տասը օրերուն, Ռումանիո գանազան եկեղեցիներուն մեջ: Բայց ուրիշ քաղցրություն ուներ Հաճկատարին: Գրկախառնում մըն էր ան հին դարերուն հետ, որոնք աղոթք էին Հաճկատարի կամարներուն տակ, — տոնախմբությունը հոգեկան կյանքին, զոր Հայ Եկեղեցին ընկերացուցեր էր հայ հողեն փախուղ քարավաններուն: Եվ միևնույն ատեն պանծացումը Հայ և Ռուման եկեղեցիներունոր եղբայրություն, նվիրական բարձունքի մը վրա, որ հայ հավատքը կխորհրդանշեր դարավոր իր ջերմությունը մեջ:

Մատաղի սեղան շունեցանք: Փոխարեն, Հաճկատարը կողք-կողքի սեղան նստեցուց Հայ և Ռուման եկեղեցիները ու քանի մը տասնյակ հայ ուխտավորներ Սուլավային, Բուրեղեն, Բոտոշանեն և Ռումանեն ու սեղանը վերածեց եղբայրական տոնի մը, որպիսին ունեցած չէր Հաճկատարը դարավոր իր պատմության մեջ: Անուշ հուզումը համակեր էր բոլորս, հայ և ռուսներ: Փոխադարձ եղբայրության և սիրո ցույցեր բազմիցս ունեցած են երկու ժողովուրդները, բայց տարբեր է այսօրվանը: Անոնք կզրկախառնվին իրենց հավատքին մեջ ալ այսօր:

Հուզման այս պահուն, զոր կունենամ Հաճկատարի սեղանին վրա, քանի մը խոսք ըսելու համար բաժակը ձեռքս, կշվարիմ բառերը որոնած ատեն: Ինչպե՛ս բառ ճարել, երբոր դարերը, որ Հաճկատարի ստորոտեն անցան, հոգիդ կճմլին հիմա, երբոր կզգաս, որ Անին իր հուսկ բեկորները քամիներուն է հանձնել այս ափերուն վրա ալ, երբոր կտեսնես, որ այստեղ, շուրջդ, «Անի քաղաք նստեր կուլա...»:

Ու հանկարծ սիրտդ կփղկփի մեկեն, տեսնելով մենավոր այս վանքը, որ կհսկե ավերակներուն վրա, զորս Անին թողուց հոս. կուզե դիմանալ, որպեսզի դեռ երկար պատմե աշխարհին, թե հայեր անցած են հոսկե, աղետներեն փախչելով, բայց սերմ ցանելով իրենց ամեն մեկ քայլին. որպեսզի վկայե

վաղվան մարդոց ալ, որ երկար տոկաց հայը հոս, որովհետև փարած մնաց իր պապերուն հավատքին, որ եթե սպառեց զայն ժամանակը ի վերջո, իր կանթեղին մեջ յուզն անսպառ ըրավ վերջին հայը...:

Այդ մտածումն է, որ հուզումդ կամոքե պահ մը, ու կզգաս, որ «Անի քաղաք պահ մը կժպտի», հպարտ, որ վերջին հայը յուզը անսպառ ըրավ Աստվածամոր կանթեղին մեջ, որպեսզի Ան հսկե իր ալ աճյուններուն, երբոր ինքն ալ այլևս չըլլա...:

Մտածումս պահ մը թեև ար առած կսուրա ետև, կտեսնե, որ կողջագուրվին իր դեմը երկու եկեղեցիները, ու կհիշե պահերը, երբոր անոնք իրարու խոժոռ նայեցան երբեմն. կհիշե, որ ավելի քան չորս դար առաջ, 1551-ին, շար իշխան մը, որ Շտեֆան Ռառեշն էր, ավերեց սույն Հաճկատարը: Զորս դար հետո, երկու հոգևոր պետեր սիրո համբույրներ կփոխանակեին իրարու հետ, ու անուշ խոսքեր կըսեին իրարու երկու եկեղեցիները, այս պատմական Ս. Սեղանին վրա, մինչ Հաճկատար Ս. Աստվածածինը, քիչ անդին, սփոփանք կբաշխե-իրեն դիմող ռուսներ հավատացյալներուն...:

Շրթունքներս շունչ կառնեն մեկեն այս քաղցր մտածումներուն հետ, բառերը կսկսին հորդիլ սրտես, որովհետև ա՛լ գտնված է աղվոր բնաբանը.

«Անի քաղաք պահ մը կժպտի...»:



Ժամ է, որ ա՛լ հեռանանք դարերեն ու անոնց դիզած ավերակներեն, զանոնք հանձնած Հաճկատարի մայրական պահպանությունը...:

Կառախումբը, որ մեզ կբաժնե Սուլավային, մեր հետ կտանի անուշ հուզումն ալ, զոր Հաճկատարը այդ օրը մեզ ապրեցուց, և վերջին բառերը մեր բաժակաճառին.

«Անի քաղաք պահ մը կժպտի...»:

Գ.— Մինչ կողջագուրվին եկեղեցիները

Հուզիչ եղավ երկու եկեղեցիներու ողջագուրումը: Համբույրը, զոր երկու հոգևոր պետերը կփոխանակեին, կուզար նվիրագործել, անգամ մը ևս, երկու ժողովուրդներու սիրո դարավոր կապը:

Սիրո այդ կապը դիմացեր էր շատ մը փորձությունաց, ու հիմա անգամ մը ևս կսրբագործվեր եղբայրական այն ցույցերուն մեջ, որով Ռուման Եկեղեցին կընդուներ Հայ Եկեղեցվո Հոգևոր Պետը:

Ու ժողովրդական խանդավառությունը, որ երկու եկեղեցիներու գրկախառնումին կընկերանար, երկու եկեղեցիներու պաշտոնական այս հանդիպումը կվերածեր եղբայրա-

կան տոնի մը, ուր կողակողներ երկու ժողովուրդներու սիրելիք կենակցութիւնը վեց և ավելի դարերու ընթացքին:

Արդարեւ, հայը հազվադեպորեն որեւէ հողի վրա այնքան ջերմ ասպնջականութիւնը գտած է, որքան այս երկնքին տակ, և թերևս ոչ մեկ տեղ այնքան սիրով քրտինք չէ թափած, որքան ռումեն ժողովուրդի ծոցին մեջ: Ավելին. Արևելյան Եվրոպայի երկրներին ոչ մեկուն մեջ այնքան աղատ չէ շնչած Հայ Եկեղեցին և այնքան երկար չէ դիմացած, որքան այս ափերուն վրա:

«Կրոնական հանդուրժողութիւնը», զոր ռումեն ժողովուրդի մեծագույն առաքինութիւններին մեկը հռչակեց ռումեն մեծ պատմաբան մը, որպիսին էր Բողդան Հաշոն, ձրի տիտղոս մը չէր իրականին մեջ: Ծիշտ է, կրոնական հանդուրժողութիւնը իմացութիւն մըն է, որ դիմագիծ կփոխե դարե դար և միջավայրե միջավայր, բայց բոլոր պարագաներու տակ վկան է ան ասպնջական ոգիի մը, որ եղբայր կղարձեն հարեանները:

Ռումեն ժողովուրդը հանդուրժող եղավ իրոք. եղավ, երբ դժվար էր ըլլալ այդպիսին, երբ կրոնական մոլեռանդութիւնը դարերուն հետ դեռ կը բարձր սանձարձակ, ու կկաշկանդեր մարդոց հոգին, խրամատ բանալով ժողովուրդե ժողովուրդ և հարեանն հարեան, երբ դուրսեն ևս կհրահրին այդ մոլեռանդութիւնը, փորձելով թշնամի դարձնել նույնիսկ եղբայրը եղբոր:

Մեր պատմութիւնը զժնդակ պահեր անշուշտ այստեղ ալ անցուց: Իրավ ալ, ի հեճուկս այն գուրգուրանքին, որով ընդունվեր էին հայ քարվանները այս երկնքին տակ ապաստան փնտռած ատեն, և այն սրտագին ջերմութիւնը, որով հայը իր տքնութիւնը կպարզեն հյուրընկալ հողին, Հայ Եկեղեցին հոգի պահեր ունեցավ այնուամենայնիվ:

Պետք է ըսել սակայն, որ հավանական դայանափոխութիւն մը վտանգը երբեք չապրեցավ հայ ռումեն երկիրներու մեջ: Վաղացուցով դեպք մըն էր խելագար այն փորձը, զոր Շտեֆան Ռաոեշ Վոդան ըրավ 1551-ին Մոլդովայի հայերը օրթոդոքս դարձնելու համար, հալածանք, որ յոթը քաղաքներու մեջ (Սուչավա, Յաշ, Ռոման, Բոտոշան, Հոտին, Միրես և Վասուլ) շղթայաղերծված միևնույն ատեն, նողկանքով կարձանագրե ռումեն պատմութիւնը ինքն իսկ:

Ձանազան հալածանքներ, զորս հայը կրեց անկե հետո, տարբեր բնույթ ունեին: Անոնք պարզապես հետեանքն էին քաղաքական դեպքերու, որոնց մեջ մաս առած էին իրենք հայերն ալ, և որոնք իրենց դեմ թշնամութիւնը գրգռեր էին այս կամ այն իշխանին:

Եվ սակայն, «կրոնական հանդուրժողութիւնը», զոր ռումեն ժողովուրդին իբր փառքի տիտղոս կուտան իր պատմագիրները, փորձութիւն պահեր ունեցավ ինքն ալ:

Այդ այն վայրկյաններուն էր, երբ Ֆեններ, թուրքին մեղսակցութեամբ, իր թաթը տարածեց ռումեն երկիրներու վրա, իր տիրապետութեան տակ առավ իշխանական զույգ աթոռները Յաշի և Բուրեշի մեջ, իր բարբրը մխրձեց ռումեն կյանքին ներս, և հույն հոգևորականներով ողողեց ռումեն զույգ իշխանապետութիւնները: Անոնց հետ մեկտեղ ներս մտավ նաև «Արցիժուրը»<sup>5</sup>:

Գ.— Վերջին քրթմնջուները

Ի հեճուկս սակայն բոլոր այս անհեթեթութեանց ու քրթմնջուներուն, դարը թոթված էր արդեն իր մոլեռանդութիւնը:

Ռումեն Եկեղեցւոյ ծոցին մեջ նոր սերունդ հասած էր, որ այլևս կրնար պժգանքով նայել երեկվան վրա: Տակալ վերջ էին սկսեր գտնել տղեղ որակումները, զորս սերունդները փոխանցեր էին մեկը մյուսին, և զանոնք տեղավորեր եկեղեցական գրքերու մեջ ալ:

Դեռ անշուշտ հիմնապես չէր ուսումնասիրված Հայ Եկեղեցին իր պատմութեան ու վարդապետութեանց մեջ, և թյուրիմացութիւններ, ինչպես և սխալ դատաստաններ դեռ կային: Բայց նախապաշարումներն ու կիրքը այլևս չէին շեշտ դնողը Հայ Եկեղեցւոյ նվիրված հետազոտութեանց մեջ:

Դիմիտրու Դանն էր մեկը այն ռումեն հոգևորականներն, որոնք Հայ Եկեղեցիով և հայ հավատացյալներով ևս զբաղեցան, այլևս պաղարշուն մոտենալով անցյալին: Բացի Մինաս Թոխատեցիի ողբեն, 1551-ի շարաշուք դեպքերուն մասին, որուն գերմաներեն թարգմանութիւնը պիտի տար 1894-ին Չերնըուցի մեջ, նույն քաղաքին մեջ լույս ընծայեց Դանն պատմական աշխատութիւն մը Բուքովինայի հայերուն մասին, նախ 1890-ին գերմաներեն և 1891-ին ռումեն լեզվով, աշխատութիւն, որ հայերենի ևս պիտի թարգմանվեր նույն տարին<sup>6</sup>:

Դիմիտրու Դան 1896-ին համառոտ գրքուկի մը նյութ պիտի ըներ Մոլդովայի և Բուքովինայի մեջ գտնված շորս ամենահին հայերեն ձեռագրերը, ու ավելի հետո, 1902-ին, պիտի զբաղեր, ուրիշ գրքուկի մը մեջ, Հայ Եկեղեցւոյ միաբնակութեամբ<sup>7</sup>, և

<sup>5</sup> Վիրավորական բառ Հայ Եկեղեցու հասցեին:

<sup>6</sup> «Արևելյան հայք ի Բուքովինա», թարգմ. Հ. Գրիգոր վարդապետ Գալմիսթալ, Վիեննա, 1891:

<sup>7</sup> Dan Ilimtru, «Monofisitismul în biserică armeană orientală», Cernăuți, 1902.

վերջապես, 1904-ին լույս պիտի ընծայեր, միշտ Ձերնըուցի մեջ, ռումաներեն և գերմաներեն երկու գրքույկներ հայկական սովորությանց և հավատալիքներու մասին ծնունդի, հարսնիքի և հուղարկավորությանց առթիվ:

Քիչ հետո, ռումեն ուրիշ քահանա մը, Միրոն Սարելար, թեզի մը նյութ կաններ Հայ և Ռումեն եկեղեցիներու միջև գոյություն ունեցող զանազանությունները և զայն կտպագրեր առանձին գրքույկով ալ<sup>8</sup>:

Շատ ավելի նոր օրերու, այս անգամ արւեսն «Ortodoxia»-ի էջերեն, Հայ եկեղեցիով և իր վարդապետությամբ պիտի զբաղեր աստվածաբանական կաճառի հոգևորական դասախոսներեն մին, Ն. Գիցեսկուն, օրթոդոքսության և արևելյան եկեղեցիներու միջև հարաբերությունները լուսաբանելու առթիվ<sup>9</sup>:

Բոլոր այս գրությունները՝ արդեն թոթափած կթվին ըլլալ հին օրերու նեղմիտ ոգին, և առավել-ապես պատմական մտահոգությունը որդեգրել իբր ուղեցուցց: Եվ այնուամենայնիվ անոնք զեծ չեն թյուրիմացություններ, որոնք թերևս չսպրդեին, եթե անոնց հեղինակները տեղյակ ըլլային հայ աղբյուրներու Շնորհալին, օրինակ, որ իր «Ընդհանրական»-ով զիրենք ճշմարտության պիտի առաջնորդեր բազմաթիվ իրենց տարակարծություններուն ատեն, ոչ մեկուն մատչելի եղած է: Իսկ արդեն ուղղակի հանցանք է, երբ 1910-են հետո կատարված որևէ հետազոտություն Հայ եկեղեցիով մասին Օրմանյանը կանտեսե: Այդ թվականեն հետո լույս տեսած, գիտնականներուն մատչելի եղող բոլոր լեզուներով, Օրմանյանի «Հայ եկեղեցի»-ն օտար որևէ հեղինակ պիտի փրկեր ամեն շփոթութենէ, և ըսենք նաև՝ ամեն սյթթաբումբ:

Ուղղակի Հայ եկեղեցիով զբաղող ռումեն հոգևորականներու կողքին, ներելի պիտի չըլլար մոռացության տալ նաև անոնք, որ զանազան առիթներով հետազոտության նյութ ըրած են հայ մշակույթի տարբեր մարգերը: Անհրաժեշտ է հիշել, օրինակ, Ջորջ Ատրնեսկուն, Կլուժի աստվածաբանական վարժարանի դասախոս, որ խղճամիտ ուսումնասիրություն մը նվիրեց հայ ոսկեդարուն, Աստվածաշունչի հայերեն թարգմանության 15-րդ դարադարձին առթիվ: Հիշենք, նույնպես, հրապարակային ելույթը ռումեն գիտ-

նական քահանայի մը, Գալա Գալակտիոնի, գրագետ և ակադեմիական, որ Աստվածաշունչի հայերեն թարգմանության այդ մեծ դեպքը պանծացուց, հայ ուսանողներուն առջև իր խոսած ճառով: Չմոռանալ Յոն Պետրեսկու երաժշտագետ քահանան ալ, որ հայ երաժշտության մասին այնքան համալից պասախոսություն մը ըրավ 1935-ին համերգի մը առթիվ, որ Գալլեսի սրահին մեջ կտրվեր հիշյալ տարեդարձի տոնախմբության օրերուն:

Մահմանափակվեցանք ռումեն հոգևորականներու կողմն ցույց տրված շահագրգռությամբ դեպի Հայ եկեղեցին: Այս թե ոչ հարկ պիտի ըլլար հիշել ռուսերեն<sup>10</sup> և ֆրանսերեն<sup>11</sup> ռումաներենի թարգմանված երկեր ալ Հայ եկեղեցիով պատմության և վարդապետության վերաբերող, թարգմանություններ, որոնք ևս իրենց դերն ունեցան բնականաբար այն օրերու ձգտված միջնուրտին մեջ:

Վետք է ըսել, որ Աստվածաշունչի հայերեն թարգմանության տոնախմբությունը առիթ մը եղավ, զրեթե մանուրեք, հայ հոգեկան արժեքները պանծացնելու և հարգանքի կանչելու համար նաև օտարը բացառիկ այն դերին առջև, զոր կատարած է Հայ եկեղեցին դարերու ընթացքին: Որքա՛ն տեղին էին այն ուշագրավ խոսքերը, զորս հայ ժողովուրդի մեծ բարեկամը, Նիկոլա Յորգա, արտասանեց 1935 հոկտեմբեր 27-ին, Աթենքի բեմին իր խոսած ճառին ատեն, զանոնք ուղղելով մեզ, հայերուս. «Դուք, որ հավաքվիք եք այսօր ձեր մեծ դարադարձը տոնելու համար, գիտե՞ք, թե որքա՛ն իրավունք ունիք հպարտ ըլլալու Ուրիշ ժողովուրդներ ալ տոներ ունին: Բայց անոնք կտոնեն ավելի իրենց հաղթանակները ուրիշ ազգերու վրա, իրենց ղենքի հաջողությունները, փառքը պատերազմներուն: Այո՛, ժողովուրդներ կան, որ բնության հաղթանակը պաշտամունք ըրած են իրենց: Բայց ի՛նչ գեղեցիկ է, երբ ձերին նման հին և մեծ ժողովուրդ մը ոչ թե կամած իր մղած պատերազմները տոնել կամ իր կրած տառապանքները, այլ կտոնեն իր հոգեկան նվաճումները: Աստվածաշունչի ձեր թարգմանությունը, ասկի 15 զոր առաջ, մեկն է ամենեն մեծ հոգեկան հաղթանակներեն, զոր ժողովուրդ մը երբևիցե կրնա տարած ըլլալ պատմության մեջ»:

<sup>8</sup> Miron Preotul Sachelor Joan V, „Deosehirea dintre Biserica Ortodoxă și Biserica Armneană“, Ploesti, 1916:

<sup>9</sup> Prof. N. Ghifeseu, „Ortodoxia și bisericile ră-săritene mai mici“, „Ortodoxia“, 1961, № 4, p. 485-502.

<sup>10</sup> Mustacov V.N. „Canoanele Mărturisirii Belligi Creștinești păzită de Biserica Armenească. Tradusa din limba rusească. București, 1850.

<sup>11</sup> Tutuy Joan G., „Istoria, Dogmele, Traditiunile și Liturgia Bisericii armene din Răsărit“. Tradusă din limba franceză. Jassi, 1874.

Ե. — Հանուն հոր օրերու եղբայրության

Հոգեպես պատրաստ էր դարը, թոթափե-  
լու համար ամեն նախապաշարում և ոխ, և  
համար բանալու համար եկեղեցիներու եղ-  
բայրության Ռումանիո մեջ:

Այդ եղբայրությունը չէր կրնար սակայն  
նվիրագործվիլ, քանի օրինական գոյություն  
չէր շնորհիված բոլոր այն եկեղե-  
ցիներուն, որոնք հավատացյալներ ունեին  
Ռումեն հողի վրա:

Որպեսզի, սակայն, այդ մեծ դեպքը տեղի  
ունենար, պետք էր որ մարմին առներ նախ  
օրենք մը՝ իրավական ինքնուրույնություն  
շնորհելու համար բոլոր դավանանքներուն:  
Այն օրվան իշխանությունները տարբեր հո-  
գեր ունեին դավանանքներու մասին խորհե-  
լե առաջ, և տարբեր հաշիվներ ալ, ազատու-  
թյուն կարենալ տալու համար բոլորին: Այն-  
պես որ երկար պատեն պառլամենտ շատով  
օրինագիծք, որովհետև իրարու հաջորդող  
կառավարությունները փոփոխելիք բան մը  
միշտ կգտնեին անոր մեջ: Ու ավելցնենք, որ  
դուրսին չեղավ Հայ Եկեղեցին ալ մտցնել ար-  
տոնված եկեղեցիներու շարքը:

Հազիվ 1928 ապրիլ 22-ին էր, որ լույս  
տեսավ դավանությանց օրենքը: Ան իր 21-րդ  
հոդվածով հիշատակված պատմական եկե-  
ղեցիներու կարգին կներմուծեր նաև Հայ  
Եկեղեցին, — «Գրիգորյան» տիտղոսը կցելով  
անոր, ավա՞ղ, ինչպես ըրեր էին ուսները  
իրենց Պոլսեանիային մեջ, — և առաջին  
բայլն էր Հայ Եկեղեցվո տալու իր արդար  
տեղը մյուս եկեղեցիներու կարգին:

Անհրաժեշտ էր, որ Հայ Եկեղեցին օրինա-  
կան ճանաչում ստանար նաև իբրև թեմ, և  
ունենար պետութենեն վավերացված կանո-  
նադրությունը:

Ամբողջ երեք տարի մաքառիլ պետք եղավ  
սակայն, որպեսզի Հայ Եկեղեցին իրավունք  
ստանա իբրև թեմ կազմակերպվելու, ու այդ  
հնարավոր եղավ միայն շնորհիվ հայ ժողո-  
վուրդի մեծ բարեկամին, Նիկոլա Յորգայի,  
երբ ան երկրին գլուխը եկավ 1931-ին:

Անոր կպարտինք, եթե հայ թեմին ճանաչ-  
ման օրենքը խորհրդարանին կողմն քվեարկ-  
վեցավ 1931 հուլիսին և լույս տեսավ պաշ-  
տոնաթերթի օգոստոս 3-ի թիվով, հոկտեմ-  
բեր 27-ին Հուսիկ արքեպիսկոպոս պաշտո-  
նապես ճանչվեցավ իբր առաջնորդ Ռումանիո  
հայոց թեմին, իսկ թեմական կանոնադրու-  
թյունը, նախարարական խորհուրդի կողմն  
վավերացվելէ հետո 1931 նոյեմբեր 19-ին,  
նվիրագործվեցավ նոյեմբեր 25 թվակիր ար-  
քայական հրովարտակով մը:

Ավելի քան հինգ դար առաջ, 1401 հուլիս  
30-ին, Ալեքսանդր Չել Բուն իշխանը առաջին  
հայ եպիսկոպոսությունը հաստատեր էր Սու-  
շավայի մեջ. 530 տարի հետո, Ռումանիո  
հայ թեմը իր պաշտոնական անդրանիկ ա-  
ռաջնորդը կունենար: Հայ Եկեղեցին կմտնե  
այսպես պետության պաշտպանության տակ:

Եվ սակայն Հուսիկ եպիսկոպոս Զոհրապ-  
յանի առաջնորդության օրով, որ ավելի քան  
22 տարի էր տևեր, պատոնական հանգա-  
մանքն երբեք դուրս չկան Հայ Եկեղեցվո հա-  
րաբերությունները Ռումեն Եկեղեցվո հետ:

Դեռ ատեն պետք է անցնեք, որպեսզի եղ-  
բայրանային ալ երկու եկեղեցիները:

Նոր օրերու մեջ է միայն, որ Հայ և Ռումեն  
եկեղեցիները հոգեպես ալ շփում ունեցան:  
Այդ բանին նպաստեց նախ այն պարագան,  
որ Հուսիկ արքեպիսկոպոսի մահն և Սուրեն  
եպիսկոպոսի կարճատև առաջնորդութենեն  
հետո, թեմը վարել կոչվեցավ այս երկրին  
մեկ զավակը, հանձին Վազգեն վարդապետի:  
Ռումեն հոգևորականությունը, իր կարգին,  
մերձեցման ամեն փորձ ըրավ, և իր օրգան-  
ներուն մեջ համակրությամբ արձագանք  
եղավ Հայ Եկեղեցվո անցուղարձերուն, —  
շահագրգռություն, որ ավելի ևս պիտի աճեր  
քնականաբար, երբ կուսավորչի Գահուն վրա  
երթար բազմիլ այս երկրին զավակը:

Ռումեն Պատրիարքին էջմիածին այցը  
1958-ին սիրալիբ կապերու ճամբան բացավ:  
Առաջին անգամ էր, որ Ռումեն Եկեղեցվո  
Պետը Հայոց Կաթողիկոսին հետ կողջագուր-  
վեր, ու նոր էջ մը կբացվեր երկու եկեղեցի-  
ներու հարաբերությանց մեջ:

Ու հիմա, Վազգեն Ա-ի այցը Ռումանիա  
նոր առիթ մը կըլլա շաղախելու բարեկամու-  
թյունը Հայ և Ռումեն եկեղեցիներու միջև:  
Սրտագին ընդունելությունը, զոր ըրին Ռու-  
մեն Եկեղեցին և ժողովուրդը, ամենեն հուզիչ  
սպացույցն է եղբայրական այս նոր ջերմու-  
թյան:

Ողջույնի այն գեղեցիկ ուղերձը, զոր ժուս-  
տինիան, Ռումանիո Պատրիարքը, արտասա-  
նեց 1965 հունիս 20-ին, Դոմինիցա Պալաշա  
եկեղեցվո մեջ իր մատուցած պատարագին  
միջոցին, ուղղակի պանծացումն էր Հայ  
Եկեղեցվո և զայն ստեղծող ժողովուրդին,  
պանծացումը Եկեղեցվո մը, որ առաջինն  
ըլլալով պաշտոնական կրոնը դարձեր էր  
պետության մը, և որ դարերով կրցեր էր  
քրիստոնեության անառիկ բերդը դառնալ  
ամեն փորձություն, ամեն աղետի և ամեն  
նախճիրի առջև:

... Դարերը իրենց մեղքը կբավեն այս համ-  
բույրին մեջ, ու հանձին երկու եկեղեցիներու,  
երկու ժողովուրդներ է որ կողջագուրվին: